Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Հացավանի Հ. Մանուկյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (19դասաժամ), հասարակագիտություն (3դասաժամ), աշխարհագրություն (6 դասաժամ), և ֆիզկուլտուրա (16 դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար:

ՈՒսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլերով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),

Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

2. Անձնագրի պատճենը,
3. Ինքնակենսագրություն (Ձև 4),
4. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
5. Մեկ լուսանկար՝ 3 × 4 չափի,
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչև դեկտեմբերի 4-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10^{00}-ից 16^{00}-ը, բացի ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **դեկտեմբերի 7-ին**՝ ժամը 14^{00}-ին, Կոտայքի մարզի Հացավանի Հ. Մանուկյանի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝093–58-26-23 հեռախոսահամարով: